ԽԱՉԻԿ ԴԱՇՏԵՆՑ



# ԱՅ ԴՈՒ ԺՈՒԼԻԿ ՄՍՐԱՄԵԼԻՔ

891.99Մ
Դ-19

ՊԵՏՀՐԱՏ
ՀԼԿԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ԵՐԵՎԱՆ 1946

8088
30 MAY 2011
891.99Ա
Դ-19



Մսրա երկրում կար մի Մելիք,
Սասմա երկրում՝ Սասմա Դավիթ։
Մելիքն եկավ կռիվ անի,
Մեր քաջ Դավթին տա սպանի։
Այ դու, ժուլիկ,
Մսրամելիք։

Քաջ Դավիթը հեծավ իր ձին,
Ձեռքին բռնեց Թուր-կեծակին։
Գնաց բռնե՛ց թագավորին,
Թրով զարկե նրա փորին։
Կեցցես Դավիթ,
Մեր քաջ Դավիթ։

28.03.2013



Իր վրանում Մելիքը չար
Մի հոր փորեց խոր ու խավար։
Մի շնորհքին նայիր դրա,
Խալի փռեց հորի վրա։
Այ դու, ժուլիկ,
Մարամելիք։
—Արի Դավիթ նստիր խալուն,
Կարոտել ենք մենք քո գալուն։
—Արի ախպոր նման ճաշենք,
Հետո դուրս գանք, թրեր քաշենք։
Դավիթ նստեց ընկավ հորը,
Քըհ-քըհ արեց Թագավորը։

Մի տես վոնց է ցցել փորը,
Մեր քաջ Դավթին գցեց հորը։
Այ դու, ժուլիկ,
Մարամելիք։

Մի մեծ քար էլ վոտքով քշեց,
Բերեց հորի վրա քաշեց։
Բայց Դավիթը չսարսափեց,
Թրով ամուր քարին խփեց։
Կեցցես Դավիթ,
Սասմա Դավիթ։
Քարը երկինք թռավ հորից,
Էլ չես պրծնի Դավթի թրից։



Մելիքն ահից հորում տապեց,
Վրան քար ու կաշի թափեց։
Այ դու, ժուլիկ,
Մարամելիք։

Շողաց Դավթի Թուր-կեծակին,
Ձին խրխնջաց Դավթի տակին։
Չար Մելիքը հորում պառկեց,
Դավիթն եկավ թրով զարկեց։

Թուրը ծակեց քար ու կաշի,
Մելիքն եղավ յերկու բաժին։
Կեցցես Դավիթ,
Մեր քաջ Դավիթ։

Ուրիշի տակ ով հոր փորի,
Ինքը մեջը կգլորվի։
Թո՛ւհ քեզ, ժուլիկ,
Մարամելիք։

ՀՕՄՀ-ССРА
им. А Мясникяна



ՀՀ Ազգային գրադարան
NL0402007

8088

Գինը 1 ռ.

Նկարները՝ Կոզլովի
Պատ. խմբագիր՝ Հ. Հայրապետյան
Տեխ. խմբագիր՝ Ստ. Ալթունյան
Պատվեր 764
Հրատ. 5377.
ՎՖ 2543
Տիրաժ 4000

Х. ДАШТЕНЦ

ЭХ ТЫ ЖУЛИК
МСРА-МЕЛИК

Армгиз Ереван 1940